

ՀՈՎՀԱՆ ՕՋՆԵՑՈՒ ՄԵԿ ՍԿՋՐՆԱՂՔՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

IV դ. բյուզանդական նշանավոր մատենագիր Բարսեղ Կեսարացու գործերի հայերեն թարգմանությունների ձեռագրերի նկարագրության առիթով անվանի բանասեր Պ. Տեր-Պողոսյանը նկատել է, որ Կեսարացու «Պահոց գրքի» հայերեն թարգմանության հետքեր կան Հովհան Օճնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառի վրա¹։ Հայագետի բուն նպատակից դուրս է եղել հիշյալ մատենագիրների համապատասխան գործերի առնչակցության քննությունը, ուստի և, որքան մեզ հայտնի է, այդ հարցին նա այլևս չի անդրադարձել։ Համեմատությունը ցույց է տալիս, որ Հովհան Օճնեցին հիրավի ծանոթ է և բավական ընդարձակ քաղումներ է կատարում Բարսեղ Կեսարացու «Հարցմունք»-ի պատասխանիք» գործից, ինչպես նաև «Յաղագս գոհութեան» ճառից։ Հասկանալի պատճառով Օճնեցին շատ ավելի հաճախ է դիմում «Հարցմունք»-ի հայերեն թարգմանությանը, քան, ասենք, նշված ճառին։ Բյուզանդական մատենագրի հիշյալ գործից փոխանցված հատվածներն էլ հիմնականում աստվածաշնչական անվանումներին ու հասկացություններին վերաբերող բանաձևային ձևակերպումներ են, որոնք պահպանվել են գրեթե առանց միջամտության, ուստի և արձանագրելի են իբրև առնչակցության օրինակներ և փոխադարձ սրբագրությունների հնարավորություն չեն տալիս։

Ահա այսպիսի տեսք ունեն Բարսեղ-Օճնեցի նմանության մեր ձեռքի տակ եղած օրինակները.

«Մբոյն Բարսղի ուղղափառի եւ Ապղղիւնարի հեքծուածողի Հարցմունք եւ պատասխանիք»

«Յովհաննու Իմաստասիրի Աձնեցւոյ Մատենագրութիւնք» (Վենետիկ, 1953)

Ընդդէմ երեւութականաց

Ձեռ. № 3710* («Ժողովածու», ԺԳ դ.)

Ուղղափառ. միացուցեալ ինքեան զկարելին չարչարել մարմին, որպէս զի գոլ զչարչարանս տնաւրէնութեանն եւ ոչ բնութեանն բանին։ Զոր աւրինակ՝ վաստակեցաւ յուղեգնացութեանը՝ ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութիւն տնաւրէնութեանն... (էջ 369բ)։

Քանզի նոյն է մարմին մարդկային ունել Քրիստոսի, և բնութիւն մարդկային. և զի Քրիստոս առանց միաւորութեանն ոչ ասի Քրիստոս Յիսուս, այլ աստուած Բան։ Որպէս սուրբն Բասիլիոս ասէ. «Զի թէ ասիցէ ոք զմարմինն բնութիւն Բանին, և գրաւն բնութիւն մարմնայն, ամպարշտութեամբ լի է այսպէս ասացեալքն» (էջ 66)։

Ապղղիւնար. ուրեմն երկու կատարեալք։

Այլ կատարեալ՝ ըստ երկաքանչիւրոցն դիտելով զերկուսն, ըստ միաւորութեան՝ մի կատարեալ, մի դէմ, և մի Որդի աստուծոյ խոստովանելով. որպէս սուրբն Բասիլիոս ասէ. «Երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն» (էջ 68)։

Ուղղափառ. երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն (էջ 369բ)։

Քանզի «Զգոյութիւն մարմնայն՝ միաւորութեամբ բանին ծանեայ, ասաց

¹ Տե՛ս «Հանդես մասօրյա», 1969, № 7—9, էջ 287.

* Այս և հետագա ձեռագրերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում։

Ապողինար. Աստուած էր բանն, որ ծնաւ ի Մարիամայ:

Ուղղափառ. ծնեալն ի Մարիամայ էութիւն ի նորա բնութենէն, ոչ էր Աստուած բնաբար, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն:

Ապողինար. եւ զիա՞րդ՝ «աւրհնեալ պտուղ որովայնի քո» ասի:

Ուղղափառ. վասն զի, որ ի բնութենէ Հաւր էր Աստուած՝ բան ի բնութենէ Մարիամայ, առ զպատկեր ծառայի եւ ձեռով գտաւ իբրեւ զմարդ՝ պտուղ որովայնի նորա գտաւ (էջ 371բ):

Ուղղափառ. եւս եւ զքաղումն մարմնայն եւ զգեստ նորա ասեն բանին ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: Նոյնպէս դձայնս զանձնականս եւ զչարչարանս զանձնականս եւ զտրտմութիւն եւ զմիայն, եւ որքան ասի վասն նորա յԱւետարանին՝ Աստուծոյ բանին ասեմ, ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն (էջ 373բ):

Յաղագս զմիութեան

Ձեռ. N 822 («Պահոց գիրք», 1285 թ.)

Արդ՝ որպէս ընկալաւ զքաղցնույն Տէրն, հաստատուն կերակուրն շնչեցեալ ի նմանէ եւ զծարաւեալն իրաւացոյց խոնաութեանն ծախեցելոց, որ ի մարմնին եւ վաստակեաց մարմնոյն եւ ջլացն յուղէզնացութենէն յաւետ ձգեցելոց. ոչ աստուածութենէն աշխատութեամբ տաժանեալ, այլ մարմնոյն, որ ի բնութեանն յարմարագոյն էր՝ զպատահումն ընկալաւ, նոյնպէս եւ զարտաստուն իրաւացոյց զբնական ի մարմնի լինել զպատահումն թողացոյց, որ եւ հանդիպի յորժամ խորագոյն խելապատիկն, որ ի տրտմութենէ գոլորշիքն են, լնուցուն իբրեւ ի ձեռքն առուաց ոմանց, որք յաշնս գնացք են, խոնաւագոյնք զծանրութիւնն պատրաստէ (էջ 201ա):

ոմն ի սրբոցն. և այսպէս ասի մի դէմ, և մի բնութիւն՝ Բանին մարմնացելոյ (էջ 69):

Որպէս սուրբն Բասիլիոս ասէ. «Մենայն ի Մարիամայ էութիւնն ի նորա բնութենէն՝ ոչ էր աստուած (էջ 69) բնաբար, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն. վասն զի որ ի բնութենէ Հօր էր աստուած՝ Բանն, ի բնութենէ Մարիամայ էառ զպատկեր ծառայի, և պտուղ որովայնի նորա գտաւ եղեալ» (էջ 70):

Եւ զքաղումն մարմնայն եւ զգեստ նորա ասեմ Բանին. ոչ բնութեամբ (էջ 72) աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: Սոյնպէս զձայնս զանձնականս, և զչարչարանս զանձնականս, զտրտմութիւնն և զգոփալն աստուծոյ Բանին ասեմ. ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն (էջ 73):

Որպէս սուրբն Բասիլիոս ասէ յառ Գոհութեան ճառի՝ ասելով. «Արդ որպէս ընկալաւ զքաղցնույն տէր՝ հաստատուն կերակուրն շնչեցեալ ի նմանէ, և զծարաւեալն իրաւացոյց խոնաութեանն ծախեցելոյ, որ ի մարմնին. և վաստակեաց մարմնոյն և ջլացն յուղէզնացութենէն ձգեցելոյ. ոչ աստուածութեանն աշխատութեամբ տաժանեցելոյ, այլ մարմնոյն. որ ի բնութեանն յարմարագոյն է՝ զպատահումն ընկալաւ, նոյնպէս և զարտաստուն իրաւացոյց, զբնական լինել ի մարմնի զպատահումն թողացոյց» (էջ. 89):

Յորժամ ըստ բնութեան ինչ բարբառել հասանէր, համարձակապէս զերկաքանչիւրցն յիշէին զհասարակականսն. ոչ առ ի բաժանել զմին Որդի յերկուս որդիս, կամ յերկուս դէմս, այլ միայն յորոց էինն՝ ազդեալ նշանակէին, ասելով սրբոյն Բարսղի. Վառ-

տակնաց յուղեորութեանն՝ մարմնոյն
և ջղացն յուղեգնացութենէն յաւէտ
ձգեցելոց. ոչ աստուածութեանն աշ-
խատութեամբ տաժանեալ, այլ մար-
մնոյն որ ի բնութեանն յարմարագոյն
էր՝ զպատանձումն ընկալեալ (էջ 72):

Ինչպես տեսնում ենք, վերոբերյալ բոլոր քաղումները կատարվել են Օձ-
նեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառի առիթով: Հարցումի հայերեն թարգ-
մանությունից վերցված օրինակների բնույթի մասին խոսվեց վերևում: Սա-
կայն ուշագրավ իրողություն ենք տեսնում «Յաղագս գոհութեան» ճառի հետ-
քերին անդրադառնալիս: Բյուզանդական մատենագրի նշված գործի միևնույն
միտքը վկայակոչվել է Օձնեցու ճառի տարբեր հատվածներում, երկու դեպ-
քում էլ հիշատակվում է «սրբոյն Բարսղի» անունը: Բարսղ—Օձնեցի առն-
չակցության պատահական... զպատահումն» օրինակը կարևոր է զուտ աղ-
բյուրագրիտական-տեքստաբանական առումով: Բ. Կեսարացու հայերեն թարգ-
մանությունից քաղված նույն հատվածը Օձնեցու ճառի տարբեր հատվածնե-
րում ներկայանում է ոչ մի օրինակ, այլ առանձին տարբերակների տես-
քով: Այսպես, օրինակ.

Կեսարացի
Յաղագս գոհութեան
ջղացն (էջ 201ա)
յաւէտ ձգեցելոց
աստուածութենէն
տաժանեալ
յարմարագոյն էր
թողացոյց

Օձնեցի
Ընդդէմ երեւութականաց
ջղացն (էջ 89) — ջղացն (էջ 72)
ձգեցելոյ — յաւէտ ձգեցելոց
աստուածութեանն — աստուածութեան
տաժանեցելոյ — տաժանեալ
յարմարագոյն է — յարմարագոյն էր
թողացոյց — թողացոյց

Ջլացն—ջղացն տարբերության մասին հատուկ բացատրության անհրա-
ժեշտություն թերևս չկա, քանի որ դրանք նույն բառերն են, գրության ընդու-
նեղի երկու տարբեր ձևերով: Պարզապես պիտի նկատել, որ մատենագրու-
թյամբ ավանդվածը ջիլ-ն է (νέρον), ուստի և գերադասելի է վերջինիս
նմանությամբ Հ. Օձնեցու ճառում նույնպէս կարգաւ ջլացն:

Յաւէտ ձգեցելոց արտահայտությունը «Յաղագս գոհութեան» ճառում ա-
ռաջացել է հունարեն «ὁπεραθῆναι»²-ը թարգմանելու եղանակով, ուստի
պիտի ենթադրել, որ Հովհան Օձնեցու հատվածում առկա ձգեցելոյ կիրառու-
թյունը վկայակոչված կապակցության միջամտված տարբերակն է, որը ըստ
Կեսարացու ճառի հայերեն թարգմանության պիտի ուղղել յաւէտ ձգեցելոց,
մի բան, որ հաստատվում է նաև Օձնեցու իսկ նման մեկ այլ կիրառությամբ
(յուղեգնացութենէն յաւէտ ձգեցելոց):

Աստուածութենէն ընթերցումը Կեսարացու ճառի հայերեն թարգմանության
ձեռագրերում պահպանվել է ևս երկու տարբերակով՝ աստուածութեամբն և
աստուածութիւնն, որոնք ավելի մոտ են Օձնեցու օրինակներին: Հունարենում
ուչ աստուածութենէն արտահայտության դիմաց ունենք «σοῦτης θεοτης»³
հոլովածը: Ձեռագրական ընթերցումների համեմատությունը ցույց է տա-
լիս, որ Հովհան Օձնեցու ճառում պահպանվել է կապակցության քերականո-
րեն ավելի ստույգ ձևը: Սակայն չի կարելի մերժել նաև հնագույն գրագրե-
րով ավանդված աստուածութենէն տարբերակը, որը հանդիպում է «Պահոց
գրքի» մյուս նյութերում նույնպես:

Աշխատութեամբ տաժանեալ արտահայտության հիմքը հունարեն «τῷ
καμᾶτῳ δαμασόμενῳ»⁴ կապակցությունն է, ուր բնագիր-թարգմանություն

² PG, t. 31, էջ 228, հմմտ. Древнегреческо-русский словарь (այսուհետև՝ ДРС),
т. 2, М., 1958, с. 1680.

³ PG, նույն տեղում:

⁴ նույն տեղում:

հարաբերությունը որևէ վերանայման անհրաժեշտություն չի պարտադրում, ուստի Օձնեցու տաժանեցելոյ-ն նույնպես պիտի վերընթերցել տաժանեալորը միաժամանակ հաստատվում է «Ընդդէմ երեւութականաց» ճառի հարակից վկայությամբ (աշխատութեամբ տաժանեալ): Ժիշտ նույն հիմքերը կան Օձնեցու յարմարագոյն է ձևակերպումը վերընթերցելու յարմարագոյն էր⁵:

Ձպատաճումն թողացոյց կապակցությունը նույնպես բնագրային հիմքունի՝ «σύμπτωμα εμχωρών»⁶, ուր խոսքը թողացուցանելու (συχωρέω)⁷ մասին է և ոչ թե թուլացուցանելու: Թվում է բավարար նախադրյալների կան Օձնեցու հատվածում նշված բառը կարդալ թողացոյց: Նույն եղանակով, Կեսարացու «Յաղագս գոհութեան» ճառի հայերեն թարգմանության և բնագրի հետևության մասին Օձնեցու ճառի համադրվող հատվածի գծադրվել-ը պիտի ուղղել գծադրվել, ծախեցելոյ-ը՝ ծախեցելոց, մարմին-ը՝ մարմինն⁸ և այլն:

Այսպիսով, վերոշարադրյալը հիմք է տալիս ասելու, որ Հովհան Օձնեցին ծանոթ է եղել Բարսեղ Կեսարացու «Հարցմունք եւ պատասխանիք»-ի, ինչպես նաև «Յաղագս գոհութեան» ճառի հայերեն թարգմանություններին և օգտվել դրանցից: Երկու մատենագիրների վերոբերյալ ընդհանրությունները հիմնականում բառացի նմանության օրինակներ են: «Հարցմունք եւ պատասխանիք» երկից քաղված հատվածները բանաձևային ձևակերպումներ են, որոնք երկու դեպքում էլ պահպանվել են գրեթե անխաթար և, բնականաբար, սրբագրման-ճշգրտման հնարավորություն չեն տալիս: Մինչդեռ «Յաղագս գոհութեան» ճառի հայերեն թարգմանությունը որոշակի միջոց է ընձեռում վերանայելու-սրբագրելու Հովհան Օձնեցու ճառի առանձին բառեր և արտահայտություններ: Առաջարկվող սրբագրությունները վերահսկվում-հաստատվում են բյուղանդական մատենագրի ճառի հունարեն նախօրինակով:

ОБ ОДНОМ ПЕРВОИСТОЧНИКЕ ИОАННА ОЦНЕЦИ

К. М. МУРАДЯН .

Резюме

Значительную часть армянской переводной литературы составляют литературные произведения, именуемые патристическими. В ряду переводов данного жанра древностью, обилием списков и влиянием, оказанным на армянскую литературу, выделяются армянские переводы трудов автора IV в. Василия Кесарийского. Одним из достоверных способов восстановления изначального оригинала средневекового памятника является изучение древних переводов, сопоставление которых может подготовить реальную почву для критического текста. Сочинения византийского автора оказали определенное влияние на труды исконно армянских авторов, являясь литературным первоисточником для многих из них, в том числе и для Иоанна Оцнеци.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 229:

⁷ ДРС, էջ 1526:

⁸ Տե՛ս PG, t. 31, էջ 288: